

(= 956) բուերը կան. այս խաչքարը մերձաւորապէս Պաչա-
կիրներէն 150 տարիէ աւելի յառաջ գոյութիւն ունենալով ա-
գուցուած է վանքի արտաքին պարսպին ճակատը: Երկու խաչ-
քարեր կան նաեւ Վերնատան արեւմտեան արտաքին պատին
վրայ «ի թուին Հայոց Ո» (= 1151), ինչպէս նաեւ հնագոյն խաչ-
քար մը Վերնատան հիւսիսային արտաքին պատին վրայ ագու-
ցուած «ՈԽ» (= 1153) թուականաւ, այս խաչքարերը, երեւան
եղած են շինութեանց առթիւ հին պատերու քանդուած ժամա-
նակ. երեցած յիշատակարաններու մէջ ամենէն հիները ասոնք
են: Ս. Յակոբայ տաճարը իր ճարտարապետական ձեւով ցոյց կու
տայ թէ հայկական է. եկեղեցիին ճիշդ մէջ տեղը կը գտնուին
քառակուսի չորս լայնանիստ ոտքեր կամ սիւներ որ կը կրեն
գմբէթ մը. այս իսկ է զլխաւոր ապացոյցը շէնքին հայկականու-
թեան. ան ճիշդ նմանն է հնագոյն հայ եկեղեցիներուն եւ կա-
ռուցուած է Մայր Մաշտոցի հրահանգաց համաձայն, և կատար-
եալ նման ձեւեր ունի, ինչպէս էջմիածնի, Բագրեանդայ, Գլա-
կայ եւ ուրիշ հին մայր տաճարներու: Տաճարը թէ արեւելքէն
արեւմուտք և թէ հարաւէն հիւսիս երեք մասերու կը բաժնուի:
Ամբողջ տաճարին երկայնութիւնը 22 մէթր է, աւագ գուռնէն
մինչև աւագ սեղանին ետևի կիսարտլորակը, իսկ լայնութիւնը
հարաւէն հիւսիս միջին հաշուով 16 մէթր, որ կու տայ իբր 350
քառակուսի մէթր տարածութիւն: Տաճարի արեւելեան կողմի
սեղանները դէպի ետ քաշուած են շատ կանուխ թուականներու
մէջ, Կիլիկեցի հայ թագաւորաց օրով, պարգապէս բեմը և դասը
լայնցնելու համար. այս մասին յիշատակութիւն մը չունինք,
բայց արտաքին կողմէն արեւելեան երկու կողման պատերուն
վերջաւորութիւնը ճարտարապետական կառուցուածքէն զիտելով
կը տեղեկանամք թէ արեւելքի վերջացող մասերը հին պատերուն
նոր ագուցուածի ձեւը առած են. իսկ արեւմտեան կողմի մասը
նորոգուած կը թուի 1835-36ին, երբ կանանց վերնատունը շին-
ուած է:

Տաճարին սրբավայրերը նկարագրելէ յառաջ եկեղեցւոյ գար-
դերը պէտք է նկատի առնենք. եկեղեցւոյ, դասի, աւագ սեղանի
պատերը մէկ մարդաչափ բարձրութեամբ կուտինտական ընտիր
շինիներով զարդարուած են Գրիգոր Շղթայակիր պատրիարքի
օրով. դասին մէջը ու բեմին վրան երփներանգ մարմարներով